Հ.	ԹԵՄԱ	ԽՄԲԵՐԳԻ ՏԵՍԱԿԸ	ԺԱՄ	ՇԱԲԱԹ
1	Զայնային վարժություններ ,,Դպրոցի հիմն,, Երևանի, Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմն. դպրոցի օրհներգ Խոսք՝ Ա.Սաֆարյանի երաժշտ.՝ Լ .Տիգրանյանի	Միաձայն	2	1
2	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Իմ ուսուցիչ,, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի	Երկձայն	2	1
3	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Ազգ փառապանծ,, երժշտ.՝ Ա. Բաբաջանյանի	Երկձայն	4	2
4	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Երեբունի-Երևան,, երաժշտ.՝ Է. Հովհաննիսյանի	Երկձայն	4	2
5	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,, Whisper,, Greg Gilpin	Երկձայն	4	2
6	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Ave Maria,, Julio Caccini	Երկձայն	4	2

7	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,You gotta generate heat,, Dan Schwarz	Երկձայն	4	2
8	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Carol of the bells,, Lindsey Stirling	Երկձայն	4	2
9	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Դինգ-դոնգ,, երաժշտ.՝ Ռ. Ամիրխանանի	Երկձայն	4	2
10	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Ո՛չ, չեն մեռնում հերոսները,, հայրենասիրական երգ	Միաձայն	2	1
11	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,, A Jazz Suite,, By Macc Huff	Եռաձայն	4	1
12	Զայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Տղերքը որոնք չկան,, երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի	Երկձայն	4	2

13	Ձայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,, Go down Moses,, Louos Armstrong	Երկձայն	4	2
14	Ձայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Vois sur ton Chemin,, Bruno Coulais	Երկձայն	4	2
15	Ձայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Early one morning,, անգլիական ժող. Երգ	Եռաձայն	4	2
16	Ձայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,, Սուրբերու աչքեր,, երաժշտ՝, Մարտին Ավարոնյանի	Միաձայն	2	2
17	Ձայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Երկիր Հայրենի,, երաժշտ՝, Ռ. Պետրոսյանի	Երկձայն	4	2
18	Ձայնային վարժություններ Սովորած երգերի ամրապնդում ,,Журавли,, Марк Бернес	Երկձայն	4	2
19	Ձայնային վարժություններ	Երկձայն	4	2

	Սովորած երգերի ամրապնդում ,, Հայաստան,, երաժշտ՝, Կոնստանտին Պետրոսյանի			

Հաստատում եմ՝

Տնօրեն՝ _____ Ա. Սաֆարյան

Երևանի, Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմն. դպրոցի

ԼՈՒՍՆԿԱ

Երգչախումբ

Խմբավար՝ Աննա Հակոբջանյան

2023-2024 ուստարի

Բացատրագիր

Հանրակրթական դպրոցի երգչախումբը համարվում է արտադասարանական գեղարվեստական խմբակ, որը իր կարևոր դերն ու նշանակությունն ունի աշակերտի զարգացման գործում:

Այն աշակերտի մոտ զարգացնում է գեղագիտական ճաշակ: Սովորեցնում է կիրթ և գրագետ երաժշտասեր լինելու արվեստը:

Երգը ներգործում է սովորողի ներաշխարհի վրա, հուզազգացմունքային լիցք է տալիս նրան: Երգեցողության ընթացքում մասնակիցները կարողանում են ազատ արտահայտել իրենց ապրումները, հոգեվիճակը, լիցքաթափվում են, ստանում մեծ հաճույք և բավականություն:

Երգչախմբի գործունեության շրջանակներում զարգանում են նաև սովորողների՝ մեկը մյուսին լսելու, հարգելու, օժանդակելու, համագործակցելու, ապրումակցելու կարողությունները և պատասխանատվության զգացումը, որոնք շատ կարևորվում են նոր ՀՊՉ-ում:

,,Լուսնկա,, երգչախմբի գործունեությունը

Երևանի, Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմն. դպրոցի ,,Լուսնկա,, երգչախումբը իմ ղեկավարությամբ գործում է 2018թ-ից:

Երգչախմբում ընդգրկված են դպրոցի 4-9րդ դասարանների աշակերտներ: Կազմը ամեն նոր ուսումնական տարում համալրվում է նոր անդամներով:

Երգչախումբը մասակցում է ոչ միայն դպրոցական, այլ նաև արտադպրոցական միջոցառումների:

Երգչախմբի տարեկան պլանը կազմված է ըստ խմբակի համար հատկացված ժամերի քանակի՝ շաբաթական 2 ժամ:

Երգչախմբի նպատակը

- Նպատակն է առաջացնել սեր թե՛ հայկական, և թե՛ այլ ազգերի երաժշտության հանդեպ:
- Երգչախմբի դասերի նպատակն է աշակերտների մոտ զարգացնել երաժշտական ընդունակություններ, լսողության, ռիթմի զգացողություն և կատարողական հմտություններ:
- Նպատակն է ձևավորել խմբային երգեցողության կարողություն:
- Նպատակն է զարգացնել երկձայն երգեցողության կատարողական հմտություններ:
- Նպատակն է ձևավորել համագործակցության մշակույթ:
- Նպատակն է ամեն ուսուցանվող նյութի հետ աշակերտին ծանոթացնել տվյալ նյութի հեղինակին և նրա գործունեությանը:
- Նպատակն է մասնակցել համադպրոցական, համայնքային և քաղաքային միջոցառումներին:
- Զարգացնել ունիսոն երգեցողության կարողությունը:

Խնդիրներ

- Դպրոցական երգչախմբի ստեղծում
- Երգացանկի ընտրություն
- Ընտրել միասնական հագուստ կամ դետալ՝ ներկայանալու համար
- Անկախ երգչախմբի ծրագրային նյութից ներկայացնել համադպրոցական, համայնքային կամ քաղաքային միջոցառումների համար նախատեսված երգեր

Վերջնարդյունքներ

- Յուրացնի մատուցված նյութը
- Հասկանա խմբի ղեկավարի ձեռքի շարժումները
- Երգը կատարի ճիշտ դրվածքով և ինտոնացիայով
- Ընկերակցի, դրսևորի բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցի և հաղորդակցվի տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին
- ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը

- Ակտիվ մասնակցի դպրոցական և համայնքային միջոցառումներին,
- Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, այցելի համերգասրահներ:
- Դառնա հայ ազգային երգարվեստի կրողն ու սերունդներին փոխանցողը:
-